ՎԱՐԴԱՆ



№ 4 ԱՊՐԻԼ 1910

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զատիկ	Տ. Ադաթաք.
Զատկից քիչ առաջ	Գ. Բաշինջաղեան
Ճշմարտախօս մանուկը . . .	Ընծայասէր
Զատկական ծաղիկներ . . .	Պատկեր
Օրինակելի պատանիներ . . .	Գ. ք. Մատինեանց
Թուխիկին դատիկը տալու . .	Գ. ք. Գորգեանց
Լուսնի պատմութիւններից (Անդերսէն) .	Զ. Տ.-Գ.
Ուզած և ստեղը	Տ. Ակունեան
Մի ռառանի կռունկի պատմութիւնը .	Սօվասիլնա
Բնութիւնն ինքն է ուղեցոյց . .	Ա. Բիշմիշեան

ԺԱՄԱՆԱՑ.

Տառախաղ

Հանելուկներ

Շուտասելուկներ

Շաբաթաթաղ։

Ներկայ №-ի հետ ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ միւնոյն հասցէով ըստացող բաժանորդներին ուղարկուում է **ԽՋՄԱՆ Ս. ՏԱՃԱՐԻ ԴԵՂԱՏՆԿԱՐՔ** XIX *դարու սկզբներում։*

Թիւրիմացութիւն չառաջանալու համար յայտարարում ենք, որ վիճակահանութեանը մասնակցում են բացառապէս այն բաժանորդները, որոնք լրիւ վճարել են տարեկան բաժանորդագինը։

Վիճակահանութիւնը կը կայանայ ապրիլի 23-ին։

XXVIII ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ XXVIII

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հրատարակուի տարին 1910 № 4 Ապրիլ

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

Զ Ա Տ Ի Կ

(Նէէր Աղբիւրի մատաղ ընթերցողներին)

Էքուց կաթմիը զատիկ է,
Հազարենց մի հատիկ է,
Մեռնեմ նազով նրա գալուն՝
Նա չի գալիս անգարուն։

Գարնան հազար ծաղկի պէս՝
Նա էլ նաշխու է ու հեզ,
Մատաղ լինեմ նրա տեսքին՝
Դուր է գալիս ամենքին։

Արի՛, արի՛, զատիկ չկայ,
Մենք ամենս քեզ դուրբան,
Արի՛, շուտով մեզ հասի՛,
Վերջ տուր երկար մեծ պասին։

Արի՛, քեր մեզ գառն ու ուլ,
Կարմիր հաւկիթ ծէրը տուր,
Ա՛խ, էրնէկ ճրը կըլնի որ՝
Գաս ու ճաշս ամեն օր։

Ց. Ալպարար

ՉԱՏԿԻՑ ՔԻՉ ԱՌԱՋ

Պատշգամբի վրայ Արմէնն ու իր քոյրիկ Գայիանիկը օդակախաղի միջոցին վիճում էին. քիչ էր մնում խռովէին միմեանցից, բայց քանիսը նրանք խելօք երեխաներ էին, այդպիսի բան չարին։

—Գայիանիկ,—ասաց Արմէնը,—վորձիր ասել ինչ որ ուզում ես, ես կարող եմ իսկոյն այնպէս սաղացնել, որ լաւ ոտանաւոր դուրս գայ։

Գայիանիկը արտասանեց,—Նոր շորերս կըհագնիմ Զատկին։

Արմէնը սաղացրեց.—Բոլոր տիկնիկներդ սատկին։

Գայիանիկը սարսափած վազ տւեց իր տիկնիկների մօտ, վերցրեց ձեռքին, շօշափեց նրանց դէմքերն ու մարմինները և երբ համոզւեց որ նրանք անվնաս են՝ համբուրեց ու վերադառնալով Արմէնի մօտ ասաց.

—Հիմի դու ասա մի բան։

...Շուտով կըգայ Զատիկ։

—Օղակդ կոտրի,—աղաղակեց Գայիանիկը։

—Չեղաւ, չեղաւ,—ծիծաղելով նկատեց Արմէնը,—չըկարողացար սազացնել։

—Չըկարողացայ, որովհետև դժւար բան ասացիր. ապա. ես կասեմ այս խօսքերը. «շուտով կըգայ Զատիկ»։

—Յաւի քո մատիկ, գոռաս «վայ տատիկ», լսեն քեզ մարդիկ, ծիծաղեն սատիկ... հը, էլի ուզում ես,—ասաց Արմէնը։

Գայիանիկը լաց եղաւ ու գնաց մայրիկի մօտ դանգատելու, որ եղբայրը իրան վիրաւորում է։ Մայրիկը առանձին ինչ որ բան փսփսաց, Գայիանիկը ժպտաց ու վերադառնալով Արմէնի մօտ ասաց։

—Հիմի դու ասա «պանիր ու հաց»։

Արմէնը կրկնեց.

—Բերանդ է բաց,—պատասխանեց Գայիանիկը։

—Լաւ ասացիր, սազում է,—նկատեց Արմէնը։—Ապա դու ասա միևնոյն բանը։

—Պանիր ու հաց,—ասաց Գայիանիկը։

—Աչքերդ են թաց, խելքդ վեր գնաց, քեզ բան չըմնաց....

Գայիանիկը վիրաւորուած նորից գնաց մայրիկի մօտ դանգատելու։

Մայրիկը դուրս եկաւ պատշգամբ՝ Արմէնին խրատելու, որպէսզի վատ խօսքերը չասի իր քոյրիկին։ Այդ րոպէին բակում երևացին երկու երեխայ, ոտաբոբիկ ու գլխաբաց։ Նրանց շորերը բոլորովին պատառոտուած էին։ Մեծը տղայ էր, իսկ փոքրը՝ աղջիկ, մօտ վեց տարեկան։ Նա լաց էր լինում։

Մայրիկը իր երեխաների ուշադրութիւնը դարձրեց այդ աղքատ երեխաների վրայ, ասելով.—Տեսէք ձեր հասակին են, բայց ձեզ նման բախտաւոր չեն։

—Ինչո՞ւ է լալիս այդ աղջիկը,—հարցրեց Արմէնը,—ոչ ծեծեց նրան։

—Ոչոք չի ծեծել,—պատասխանեց մուրացկանը.—լաւ է, որովհետև քաղցած է։

—Ինչո՞ւ տուն չես տանում ու հաց տալիս։

—Ոչ տուն ունենք ոչ հաց։

Արմէնի համար նորութիւն էր այդ բանը։ Նա չգիտէր, որ կան իր նման երեխաներ, որոնք ոչ տուն ունեն, ոչ հաց։ Գայանիկը նոյնպէս ապշած մնացել էր։ Երկուսն էլ սաստիկ տխրեցին և հազիւ զսպում էին արցունքները։

Մայրիկը հրամայեց ծառային կերակրել քաղցած երեխաներին։ Ծառան նստեցրեց նրանց խոհանոցում ու դարսեց նրանց առջև հացի և կերակուրի մնացորդը։

Արմէնն ու Գայիանիկը զարմանում էին նրանց ախորժակի վրայ, որ հացի կտորտանքն ու սառած, արդէն անպէտքացած կերակուրը ագահաբար ուտում էին։ Փոքրիկը, որ քիչ առաջ լաց էր լինում, սկսեց ծիծաղել, երբ իր եղբայրը կուլ տալիս այնպէս հալաց, որ քիչ էր մնում խեղդւէր։

—Ուրիշ լաւ շորեր չունէք,—նարոցրեց Արմէնը։

—Զատկին նոր շորեր չէք հագնի,—աւելացրեց Գայիանիկը։

—Ոչ,—պատասխանեցին նրանք։

—Ինչո՞ւ ձեր հայրիկն ու մայրիկը չեն առնում,—հետաքրքրւեց Արմէնը։

—Հայրիկ ու մայրիկ չունենք,— պատասխանեց մեծն ու իր քրոջ ձեռքից քաշելով պատրաստւեց գնալու։

Արմէնն ու Գայիանիկը սարսափեցին։ Նրանք առաջին անգամն էին լսանում, որ երեխաները կարող են չունենալ ծնողներ։

—Զատկին եկէք,—պատւիրեց Արմէնը,—մենք շատ բաներ կունենանք, ինչ որ ուզում էք՝ կըտանք։

—Ուրախութեամբ.—աւելացրեց Գայիանիկը։

—Կարմիր ձու կըտա՞ս,—հարցրեց փոքրիկը։

—Կըտամ։

—Փափուկ հաց կըտա՞ս։

—Կրտամ։

—Էլի ինչ ես ուզում,— հարցրեց Արմէնը։

—Էլէ... էլէ... կարմիր ձու և փափուկ հաց,—կըրկնեցին մուրացկաններն ու գնացին։

Արմէնը տխրել էր. շարունակ մտածում էր պատահած դէպքի մասին։

—Մայրիկ,—վերջապէս դիմեց նա մօրը,—դու միշտ ասում ես թէ Աստուած ամենքին սիրում է, ամենքին տեսնում է ու օգնում. ինչու՞ սրանց հաց չի տալիս, մեղք չեն։

—Մեղք չեն,—կրկնեց Գայիանիկը։

—Ինչու՞ սրանց հայրիկ ու մայրիկ չի տալիս... Ասա։

—Ասա,—աղաղակեց Գայիանիկը։

Մայրիկը լուռ էր։

—Ասա, ասա,—պատասխան էին պահանջում երեխաները իրանց մօրից։

—Երբ կըմեծանաք, այն ժամանակ կըբացատրեմ ձեզ, ասաց մայրիկը,—հիմի դեռ շատ փոքր էք և չէք հասկանայ։

Գ. Բաշինջաղեան

Զատկական ձադիկներ

ՃՇՄԱՐՏԱԽՕՍ ՄԱՆՈՒԿԸ

(Փոխադրութիւն)

Պարսկական ասացուածք

I

Մի մայր ու որդի—երկուսն միասին
Ուխտաւոր գնալ էին պատրաստուել.
Բայց երբ մօտեցան օրերը ուխտին՝
Մայրն հիւանդացաւ, ընկաւ անկողին.
Զուզելով որդուն ուխտիցը զրկել՝
Նա խընդրեց զրկից հարևաններին—
Որդուն էլ իրենց հետները տանել.
Հարևանները բարեպաշտ էին՝
Ուստացան նրբա խընդիրն կատարել։

II

Երեք օրից յետ ճանապարհ ընկնել
Պատրաստուում էին երկու կողմից էլ—
Ուխտաւն դինար վող մայրը իր որդու
Արխալուղի մէջ կարից մէջքումը
Եւ ասաց որդուն. «Ծծօք տուր ինձի դու
«Որ ուտա ու անճիշտ խօսք քո բերնումը
«Երբէք չը լինի, այլ միշտ ճշմարիտ.
«Եւ սիրտ—հոգիդ էլ պահես պարզ, վըճիտ.
«Ուխտի ես գնում, ուտա պիտի չասես,
«Թէ այն կատարած տեսնել դու կուզես։

—«Խօսք եմ տալիս քեզ», ասաց Գարեգին,
«Ճշմարիտն ասել, չը խաբել մէկին»։
Մայրն օրհնեց որդուն, խիստ կարեկցաբար
Մաղթելով նորան բարի ճանապարհ։

III

Ուխտաւորները քարաւան կազած
Ընկան ճանապարհ ձիգ շաւիղ բացած.
Վերջին ուղտի վրայ մանուկը տըրտում
Հիւանդ մօր համար աղօթք էր անում.
«Աստուած, իմ ուխտին քարով ես հասնեմ,
«Մօրս ուզածի պէս այն կատարեմ
«Եւ վերադարձիս՝ մօրս առողջ տեսնեմ,
«Քեզ էլ սրտաբուխ Քո փառքը երգեմ»։

IV

Անմարդաբնակ անապատ հասան.
Դեռ չէին կըտրել նրանք կէս ճամբան՝
Եւ ահա հեռուից թոզ ու բորեանով
Աւազակները արշաւախմբով
Արագ քայլերով առաջն կըտրեցին,
Քարաւանն իրենց մէջը փակեցին
Եւ կողոպտեցին, և պըլոկեցին,
Կողոպտած իրերն շուտ հաւաքեցին,
Տարան պետի մօտ, առաջն ածեցին։

V

Էլի յետ դարձան,
Փոքրիկ մանուկին
Այժըմ մօտեցան
Ու նրան հարցրին.
«Ի՞նչ ունիս մօտըդ, տըղայ պատուական»։
«Ուխտուն հատ դինար»,
Ասաց պարզաբար.
«Արխալուղումս է կարած այդ դումար»։

Աւազակները այս որ լսեցին՝
Հշտապ գնացին, պետին յայտնեցին։

VI.

Աւազակապետը հէնց որ այս լսեց՝
Տըղային իր մօտ բերել պատւիրեց։
Գառւէրն կատարւեց։
«Փոքրիկ դու տղայ, մօտդ ինչ ունիս»,
Մեղմաբար հարցրեց.
«Արդէն ասացի ես քո մարդկերանց—
«Թէ ութսուն դինարը գումար կայ մօտիս
«Իմ արխալուխի մէջքումը կարած»։
«Մերկացրէք դրան»,
Տըւեց հրաման.
Տղան մերկացրին, շորը քանդեցին,
Ութսուն դինարը միջից հանեցին.
Աւազակապետը տեսաւ, զարմացաւ,
Նորից կարելու հրաման տըւաւ։

VII.

Դարձաւ տըղային ու այսպէս հարցրեց.
«Քեզ, ազնիւ տղայ, ինչը ըստիպեց
«Ուղիղը ասել,
«Ու մեզ չըխաբել.
«Քեզ, իբրև փոքրիկ, ով կըխուզարկէր,
«Կամ ով քո մասին կասկած կըտանէր»։
—«Ես ուխտ եմ գընում քարաւանիս հետ.
«Մայրըս հիւանդ է, ընկած անկողին.
«Նա ինձ պատւիրեց—որ ես այսուհետ
«Յոյսըս չըդընեմ խաբելուն, սըտին,
«Այլ միշտ ազնիւը ճշմարիտն ասել.
«Եւ նա խոստացաւ ճանապարհս օրհնել.
«Մօրըս պատւէրը սուրբ է և արդար,
«Եւ ես չեմ սըտում մօր սիրոյ համար»։

VIII.

Աւազակապետը շատ խոր ըզգացած
Բըռնեց տղայի ձեռքը ու ասաց—
«Տուր ինձ քո ձեռքը, անբիծ դու մանուկ.
«Դու ինձ յաղթեցիր։ կեանքի հանելուկ
«Ջեղաւ դեռ մէկը՝ որ ինձի լուծէը.
«Ծարխափում էի ես օր ու գիշեր.
«Այսօր դու, մանուկ, լուծեցիր ինձ այն,
«Եւ ես նոր գտայ վըկութեան ճանբան.
«Թող լինի վըկայ երկինքը վերին
«Իմ ուղուած կեանքին, խօսքին և ուխտին—
«Որ ես այսուհետ այս գարշ, գազիր գործ
«Աւ միշտ կը թողեմ։ կըլնեմ հողագործ,
«Ես մայր հողի հետ, միմչն նորանով
«Կը պահեմ կեանքըս խաղաղ, անվըրդով»։
Դարձաւ ապա նա իր ընկերներին
Տալով խիստ պատուէր—իր կըտակ վերջին—.
«Ջեզ էլ պատուէր եմ տալիս, ընկերներ՝
«Թողուլ այս գարշ գործ, նայել դէպ գաշտեր.
«Ամենեղ ըշտապել, գործել ամեն օր,
«Ամենեղ որոնել և՛ գործ, և՛ հաց նոր.
«Ով չի հետևի այս գըծած ճամբիս՝
«Նա կարժանանայ վրիժառ ընդակիս»։
Դիմեց տըղային
Ջըղջումը սըրտին—
«Իսկ դու, ով մանուկ, որ մի հիշտ խօսքով
«Յեղափոխեցիր ինձի ողջ կեանքով՝
«Երդւում եմ քեզի երկրով, երկինքով—
«Յետ տալ զըրկանքներն՝ մէկը կրկնակով»։

IX

Նա իր մարդկերանց տըւաւ խիստ պատուէր—
Տալ քարաւանին բոլոր զըրկանքները
Եւ հարդել ճամբայ մինչ ուխտատեղին,

Որ անփորձ հասնեն իրենց մուրազին։
Յետոյ ծընրադրեց, երկինք աչք ձըգեց
Եւ գընաց, գընաց... ուր աչքը կըտրեց։

X

Երբ ընկերները յետ վերադարձան,
Աւազակապետն այնտեղ չըգըտան.
Անչափ զարմացան ու շըւարեցան.
Ամեն կողմ ընկան որոնել նըրան.
Շա՜տ որոնեցին.
Շատ էլ յոգնեցին,
Վերջն իրենց ծանօթ քարայրի միջին
Գըտան հերոսին...
Հանգստացած էր, ձեռքերը դոշին։

Ըննծայացի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՏԱՆԻՆԵՐ

Երկու պատանիները Ռուբէնը և Սուբէնը շատ բարեխիղճ տղաներ էին։ Ռուբէնը 12 տարեկան էր, իսկ Սուբէնը 11։ Սրանց բնակարանները մի փողոցի վրայ էին գտնւում մէկը միւսից մի քիչ հեռու։ Երկուսն էլ մի ուսումնարանի աշակերտներ էին, երկուսին էլ ուսուցիչները գովում էին թէ վարքի և թէ աշխատասիրութեան համար։ Ռուբէնն ու Սուբէնը միմեանց այնպէս էին սիրում, որ նրանք ամեն օր ուսումնարան գնալիս պէտք է միանային, նրանք միևնոյնն էին անում և ուսումնարանից վերադառնալիս։ Տօն օրերին էլ նրանք միմեանց չէին մոռանում, նրանք միասին եկեղեցի էին գնում և երբ այն տեղից վերադառնում էին՝ կամ Սուբէնն էր Ռուբէնին իրանց տան բակը հրաւիրում զնդակ խաղալու համար և կամ Ռուբէնն էր իրանց բակը հրաւիրում Սուբէնին։ Նրանք իրենց դասերը պատրաստելիս էլ միմեանց օգնում էին։ Նրանք իրանց աշխատասիրութիւնով և լաւ վարքով սիրելի էին դարձել և՛ իրանց ծնողներին, և՛ դրացիներին, և՛ ուսուցիչներին, որովհետև միշտ յիշում էին իրանց դաստիարակի ուսած խրատը թէ լաւերին մարդիկ հաւանում են և գովում են, իսկ Աստուած և՛ հաւանում է, և օրհնում է։

Մէկ օր, երբ երկուսը միասին տուն էին վերադառնում՝ Ռուբէնը 10 կոպէկանոց արծաթէ վող գտաւ։ Երբ

Սուբէնը այդ բանը տեսաւ՝ իր ուրախութիւնը Ռուբէնին յայտնեց։

Սուբէն,—ասաց Ռուբէնը,—ինչպէս որ դու իմ ուրախութեանը մասնակից ես լինում, ես էլ իմ գտած փողից պէտք է մասնակից անեմ քեզ. արի գնանք մանրավաճառի մօտ 10 կոպէկանոցը մանրացնենք, որից 5 կոպէկը քեզ կը տամ, իսկ միւս 5 կոպէկով կարմիր գոյնի մատիտ կը գնեմ նկարներիս համար։

— Շնորհակալ եմ Ռուբէն ջան. ասաց Սուբէնը,—ես չեմ ցանկանում քո գտած փողից օգտուել. աւելի լաւ է կարմիր գոյնի մատիտի հետ կապոյտ գոյնի մատիտ էլ գնես քեզ համար, և երբ գունաւոր մատիտներն ինձ էլ հարկաւորուեն, գիտեմ դու չես խնայի, որ ես էլ նկարներիս համար գործ ածեմ։

—Եթէ դու,—ասաց Ռուբէնը Սուբէնին,—չես կամենում իմ գտած փողից օգտուել, ես էլ ինձ հանելու մասից հրաժարուում եմ և չեմ ուզում գունաւոր մատիտ գնել. աւելի լաւն այն է, որ այս գտած դրամը երկուսովս ամբողջապէս ընծայենք մեր դասատանը գտնուող որբ ու չքաւոր Գէորգին. կարելի է նա դասական պիտոյքների պակասութիւն ունենայ։

— Այդ աւելի լաւ, և Աստծուն դուրեկան բան է քո ասածը,—ասաց Սուբէնը.—ես էլ քեզ հետ համաձայն եմ.

չքաւոր ընկերին օգնելը աւելի լաւ բան է, քան գումարաւոր մատիտներ ունենալը. մենք առանց նրանց էլ կարող ենք մնալ, սև մատիտով էլ կարող ենք նկարել մեր նկարները։

Այսպէս ուրախ և գոհ սրտով երկու ընկերները միմեանցից բաժանուեցան և խօսք կապեցին, որ գտած փողի մասին այն օրը տանը ոչոքի չը յայտնեն, այլ չքաւոր ընկերը Գէորգի համար պահեն։

Միւս օրն առաւօտեան Ռուբէնն ու Սուրէնը կրկին միացան ուսումնարան գնալու։ Երբ նրանք ուսումնարանի մեծ դռանը մօտեցան, տեսան, որ աշակերտները խումբ-խումբ կանգնած սպասում են առաջի զանգին։

Այստեղ էր և իրանց ընկերը չքաւոր Գէորգը։ Իսկոյն փողը տւին նրան ասելով.

—Գէորգ ջան, մեզ Ասուած 10 կոպէկ գտնելու արժանացրեց. ես և Սուրէնը վճռեցինք, որ գտած փողը քեզ տանք. ահա քեզ լինի այս փողը, գնիր ինչ քեզ անհրաժեշտ է։

Գէորգի ուրախութեանը չափ չը կար. նա մտերիմներին ասաց, որ տետրակները և գրչածայրերը չունէը ու դասերից յետոյ կը լրացնէ իր այդ պակասը։

Գրիգորիս Ե. Մաւիճեանց

ԹՈՒԽԻԿԻՆ ՋՈՏԻԿԸ ՏՍՐՍԻ

Հին ժամանակ մի շատ աղքատ մարդ կար, որ վեց տարեկան Համոյի համար հայրը գնեց սպիտակ ճակատով, սևորակ, փայլուն, խոշոր աչքերով, սև գանգուր մազերով և սպիտակ ոտերով մի գառ։ Համոյի ուրախությանը չափ չկար։ Գառը իր սև գանգուր մազերի պատճառով Համոյից Թուխիկ անունը ստացավ։

Որքան ուրախ էր Համոն իր գառնով, նույնքան տխուր էր գառը։ Նա տխուր էր, ինչպես վշտոտ ու դուռնատ որբ երեխայ։ Նա դեղեցիկ էր և դժբաղդ։ Մէ-մէ, շարունակ ձայն էր հանում փոքրիկ բերանից, կարծես մօրն էր կանչում, նրա սիրով տանջւում։ Առաջի երկու օրը Թուխիկը համարեա ոչինչ չկերաւ. այդ տանջում էր Համոյին։ Նա որքան աշխատում էր, գուրգուրանքներով, համբոյրներով Թուխիկի սիրտը ուրախացնել, գուր. Թուխիկը շարունակ մէ-մէ էր բղաւում, մօրը կանչում,

որ նրա կարօտը առնի, քաղցրահամ կաթնով փորը կըշտացնի։

—Ոռ մայրիկն ես ուզում, Թուխիկ ջան,—ասում էր Համոն և կաթնով լիքը տանը նրա դնչին մօտեցնում։

Թուխիկը գլուխը յետ էր քաշում, շարժում, աչքերը Համօին ուղղում, կարծես ասում էր.

«Ես մայրիկին եմ ուզում, ինձ ոչ մի բան հարկաւոր չէ»։

Այդ բոպէներին Համօյի դէմքը մռայլում էր ու արտասուքով աչքերը լցւում։

Այս դրութիւնը երկար չըտևեց. շնորհիւ Համօյի ձեռք առած միջոցների, չորրորդ օրը Թուխիկը մոռացաւ իր միայնութիւնը, սկսեց ազատ շարժւել և իր սիրոջ յետևից վազվզել, ուրախանալ։

—Թուխիկ, կաթ, Թուխիկ, կաթ,—ասում էր Համոն ու հեռու կանգնում։ Թուխիկը թռչում էր, դունչը կաթնով լիքը տանին մօտեցնում, սովոր երեխայի պէս ծծում, կշտանում, զւարթանում, այս ու այն կողմը թռչկոտում, Համօյի ուշքն ու միտքը տանում։ Վեցերորդ օրը Թուխիկը խոտի էլ ընտելացաւ։

Մի գեղեցիկ առաւօտ Համոն Թուխիկի հետ ճանապարհւեց Փխակի աղբիւրի մօտերքը, որ գիւղից շատ հեռու չէր, գարնան նորաբոյս քաղցր խոտերից բաժին հանելու իր Թուխիկին։ Առաւօտեան օդը մրսեցնում էր։ Թռչունները գարնան գալուստն էին երգում։ Աղբիւրների ու առւակների՝ սառցի կապանքներից ազատւած ջրերը քչքչալով ոռոգում էին իրանց ափերը, խոտերի ու դեռ չըբացւած ծաղիկների նախանձը շարժում, որ նրանք էլ, շուտ բացւեն, գարնան զեփիւռի հետ համբուրւեն։ Իսկ կապուտակ պարզ երկինքը, մի ծայրին նստացնելով շղշողուն արեգակին, հրաման էր տւել, որ իր ոսկեզօծ շողերը ափով գարնան գրկած երկրի վրայ։ Ամեն ինչ գեղեցիկ էր այդ առաւօտ։

Այն գեղեցկութեան հետ գրկախառնւած Համոն ու Թուխիկը առաջ էին գնում։ Թուխիկի ուրախութեանը չափ

ու սահման չըկար. նա անդադար թռչկոտում էր, ընդարձակ դաշտը նրան սիրտ ու հոգի էր տուել։

Մի քանի քայլ ևս, նրանք գտնուում էին Փխակի աղբիւրի ափին, որի շուրջը գարունը գարդարել էր կանաչ հագար ու մի տեսակ խոտերով։ Թուխիկը սկսեց քաղցր խոտը քաղել։ Իսկ Համօն քիչ հեռու թիկն տուած՝ չուած աչքերով դիտում էր, թէ ինչպէս Թուխիկը անուշ խոտը մշմշալով արածում է։ Նա ամեն մի պատառ անելիս Համօն կարծում էր, թէ ինքն է անում ու կշտանում։

—Կեր, մատաղ, կեր, Թուխիկ ջան, ամենայն օր այս անուշ խոտից կուտացնեմ, որ շուտ մեծանաս, էլ մայրիկիդ չըյիշես,—ասում է Համօն սրտի մեծ բաւականութիւնով։

Նրա ձայնին մասնակցում էին աղբիւրի ներդաշնակ մրմնջիւնը, Թուխիկի մշմշոցը և թռչունների ծլւլոցը, ըստեղծելով մի գեղեցիկ պատկեր, մի համերգային ներդաշնակութիւն։

Այդ օրւանից ետ, երբ արեգակը քնաթաթախ աշխարհին բարև էր տալիս, Համօն ու Թուխիկը ճանապարհւում էին դէպի Փխակի աղբիւրը։

*
* *

Անհամեմատելի կերպով վրայ հասաւ Աւագ շաբաթը։ Գիւղը վաղուց դարթնել էր գիշերային քնից։ Արտասովոր կենդանութիւն էր թագաւորում։ Երթիկներից ծուխը քուլայ-քուլայ վեր էր բարձրանում. հալւող իւղի հոտը խառնըւած զարնան անուշ հոտի հետ, աւետում էր Զատկի գալուստը։ Դոմերից, մալաքներից հարս ու աղջիկ ձւեր են կրում. եռացող ներկը նրանց էր սպասում, որ Զատկի կարմիր կարապետները պատրաստի։ Մի քանիսին էլ աչքի էին անցկացնում բրինձը, որ թաթախման փլաւը ազատ լինի քարից և չալթուկից։ Աղ դրած կողակ ու իշխան ձկներից խաշւում ամանների մէջ էին դարսւում, մեծ նանի հսկողութեան տակ։ Իսկ փոքրիկ չարաճճի երեխա-

ները օջաղի չորս կողմը կուրած՝ մի բերան բղաւում էին.

—Ա նան, ձո՛ւ, ա նան, ձո՛ւկ, ա՛ նան եղըպատա՛ռ, —ու նանին հոգից-հաւատից հանում։

Հանդերից խումբ-խումբ կամ հաւ-հաւ գառներ էին բերւում. մէ-մա՛, մէ-մա՛, —օդը թնդում էր նրանց մանկական զիլ ձայնից։ Կարմիր Զաուկի մատաղներն էին, որ օր առաջ բերւում էին գիւղը։

Թուխիկը վայրենացել էր։ Նա ձայնակցելով մէ-մէ մայող գառներին, այս ու այն կողմն էր վազվզում, կարծես ցանկանում էր նորեկ գառների հետ տեսակցել նրանցից մօրից տեղեկութիւն իմանալու, բայց նրան չէր յաջողւում։ Համօն մի փունջ խոտ ձեռքին՝ սրտամորմոք կանչում էր.

—Թուխիկ, խոտ, Թուխիկ, խոտ։

Թուխիկը անուշադիր թողնելով Համօի կանչը՝ անհանգիստ այս ու այն կողմն էր ընկնում, մէ-մէ բղաւում։ Համօին այնպէս թւաց, թէ եկող Զաուիկը Թուխիկին բաժանելու է իրանից։ Նա ոչքան աշխատեց Թուխիկին հանգստացնել, որ մէ-մէ չըմայի, անդօր գտնելով, ընկաւ յուսահատութեան մէջ։

Արևը թեքւել էր արևմուտք։ Եկէք ժամ, եկէք ժամ— լսւեց եկեղեցու զանգերի սուր ձայնը, և կորաւ շատ հեռու։ Գիւղը սկսեց շարժւել դէպի եկեղեցի։ Երիտասարդներն ու երեխաները տանում էին իրանց հետ մի-մի ձու, որ առէք-կերէքը լսելուն պէս բերանները ձգեն։

Համօյին Թուխիկը եկեղեցուց զրկեց. հաղիւ էր նա Թուխիկին հանգստացրել, որ ժամւորները Քրիստոս յարեաւ աւետելով ցրւում էին գիւղի բոլոր մասերում։ Թաթախման հանդէսը վերջացաւ։ Գիւղը քնի մէջ մտաւ։ Առաւօտը վաղ պիտի զարթնէին։ Զաուկի անդրանիկ մատաղը դեռ լոյս չբերացած պէտք է մորթւէր։

* * *

Վաղ առաւօտ էր։ Պաղ, գով գեփիւռը, խառնուելով եկեղեցու միակերպ հնչուող զանգերի ձայնի հետ, գիւղին ժամ էր հրաւիրում։ Գիւղի բոլոր մասերից մերթ ընդ մերթ գառների ցաւագինօրէն մայուններ են լսում և թռչող աստղերի պէս մարում։ Թուխիկն էլ, սիրտ կտրատող մէ՛ մամա՛, մամա՛ մէ՛ ճչաց, կարծես քնաց Համօյից օգնութիւն էր աղերսում, ու վայրկենապէս լռեց։ Սուր դանակը իր գործը տեսաւ։ Ճենճերահոտը ամբողջ գիւղը ծածկեց։ Կարմիր Զատիկը իր անդրանիկ մատաղները ստացաւ։

Համօն այդ առաւօտ բաւական ուշ զարթնեց. նա խռով էր Թուխիկից։

—Նանէ, հէ, ա անան, ուր է Թուխիկս,—ասաց Համօն դռմը դատարկ գտնելով, ու վազեց մօր մօտ։

—Թուխիկին Զատիկը տարաւ, մատաղ,—պատասխանեց մայրը երկու ձու մեկնելով Համօյին։

—Թուխիկին Զատիկը տարա՞ւ,—հեծեծաց Համօն ու ոտքերը գետնին թակեց։

Մայրը որքան ցանկացաւ հանգստացնել անմխիթար որդուն՝ անկարող եղաւ։

—Զատիկը բոլորին էլ ուրախութեան բաժին հանեց բացի Համօյից. նա շարունակ արտասուում էր ու կրկնում. Թուխիկին Զատիկը տարաւ։

Այդ օրւանից Համօն դադարեց գառան միս ուտելուց և ամեն Զատիկ գիշեր անքուն լուսացնում էր, որ իրանց տանից Զատիկն անմեղ գառ չտանի։

Պ. Ե. Պորգեանց

ԼՈՒՍՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(ԱՆԳԼԻԱՑԻՆ)

Առաջին երեկոյ

—

Երէկ,—պատմում էր լուսինը,—հայեացքս ձգեցի մի փոքրիկ բակի ներսը, որը չորս կողմից մեղմւած էր տները բարձր պատերով։ Այնտեղ տեսայ մի թխսկան հաւ իր ձագուկներով, որոնց շուրջը թռչկոտում էր մի փոքրիկ սիրուն աղջիկ. թուխսը յուսահատօրէն գըրըխկում էր ու թևերը տարածում՝ աշխատելով պատսպարել իր ձագուկներին։ Այդ ադմուկի վրայ աղջկայ հայրը եկաւ ու սկսեց յանդիմանել աղջկան։ Ես թագնուեցայ ու շուտով մոռացայ այդ դէպքը. բայց այսօր, միայն մի քանի րոպէ առաջ, ես նորից նայեցի դէպի այն բակի ներսը։ Սկզբիցամեն բան հանգիստ էր, բայց շուտով դարձեալ եկաւ այն աղջիկը. սկզբից դարան մտաւ հաւաբնի մօտ, ապա դռնակը բացարեց ու վրայ թռաւ դէպի այն անկիւնը, որտեղ ձագուկները թևերի տակ առած՝ նստած էր թխսամերը։ Թուխսը սկսեց գըրըխկալ, ձագուկները ծըւ-ծըւացին ու սկսեցին թռուռալ մի անկիւնից միւսը. աղջիկը նրանց յետևից էր ընկել։ Այդ բոլորը ես տեսայ հաւաբնի ճեղքով և շատ ցաւեցի այն աղջկայ չարութեան պատճառով։ Ողջոյն ուրախացայ, երբ նրա հայրը մտաւ հաւաբունը։ Նա աղջկայ ձեռքից բռնեց ու երէկւանից էլ աւելի բարկացած՝ յարձակւեց նրա վրայ։ Աղջիկը գլուխը բարձրացրեց։ Նրա խոշոր ու կապոյտ աչքերը լցւած էին արցունքով։—Ինչի՞ ես մտել այստեղ, հարցրեց հայրը։

Աղջիկը լաց եղաւ։

— Ես... ես ուզում էի համբուրել թխսկանին և

նրանից ներողութիւն խնդրել, որ երէկ նեղացրի իրան, բայց վախեցայ քեզ ասելու...

Եւ հայրը համբուրեց անմեղ մանկան ճակատը, իսկ ես՝ աչքերն ու շուրթերը։

Ընկղմող երեկոյ

Ես տեսայ մի փոքրիկ աղջիկ,—սկսեց լուսինը։—Շատ մարդիկ նրան յացացրել էին դառն արտասուքով։ Նրան հէնց նոր էին նուիրել մի սքանչելի տիկնիկ, այն էլ ինչպիսի տիկնիկ... Բայց այդ քնքոյշ, գեղանի տիկնիկը ամենևին վշտի համար չէ եղել ստեղծուած, այն ինչ՝ աղջկայ եղբայրները, այդ բարձրահասակ զօզօնները, նրան վերցնում դնում են ծառի վրայ, մի բարձր տեղ, ու փախչում։ Ինքը աղջիկը չէր կարողանում ձեռքը հասցնել տիկնիկին, որ վայր բերի ծառից, չէր կարողանում նրան օգնել ծառից իջնելու,—էլ ի՞նչպէս լաց չը լինէր։ Տիկնիկը, երևի, նոյնպէս լաց էր լինում։ Նա այնպիսի խղճալի կերպով իր ձեռքերը պարզել էր դէպի աղջիկը։ Տեսնո՞ւմ էք երբեմն ինչպիսի փորձանքներ է գալիս մարդու գլուխը։ Խեղճ տիկնիկ։ Արդէն մթնում էր, մօտենում էր գիշերը։ Մի՞թէ կարելի է նրան ամբողջ գիշերը թողնել մենակ։ Ո՛չ, ո՛չ։ Մանկան սրտիկը սեղմւում էր, երբ մտածում էր դրա մասին։—Ես քեզ հետ կը մնամ, ասաց նա տիկնիկին, թէև շատ էլ սրտոտ չէր։ Նրան արդէն թւում էր, թէ այնտեղ, մութ ծառուղում, պարում են տեսիլները... Ահա նրանք արդէն ծառի տակ են, ձեռքները բարձրացնում և մատերով ցոյց են տալիս տիկնիկը։ Ա՛խ, ինչպէս սարսափելի է...

—Բայց վախենալու ի՞նչ կայ, եթէ խիղճդ մաքո՛ւր է։ Ես մի վատ բան չե՞մ արել հօ... Հա՛,—յանկարծ բացականչեց աղջիկը։—Ես ծիծաղել եմ

այն խեղճ բադիկի վրայ, որի ոտը կապած է կարմիր շորով։ Նա այնպէս ծիծաղելի կերպով կաղում է։ Բայց չէ՞որ պէտք է խղճալ ու սիրել կենդանիները։

Եւ նա երեսը դարձրեց դէպի տիկնիկը.

—Դու էլ ես ծիծաղել կենդանիների վրայ,— հարցրեց նա, և տիկնիկը, կարծես, դժգոհութեամբ շարժեց գլուխը։

Ջ. Տ.-Գ.

ՈՒՂՏԸ ԵՒ ԱՍԵՂԸ

Ապրում էր Խորասանում Նադիմ քաբւանչին։ Նա ունէր հինգ ուղտ, հինգ բարձրանասնակ, յաղթանդամ ուղտ, որոնց նա շատ սիրում էր։ Եւ ինչպէս չըսիրէր, երբ Նադիմը շատ-շատ դինարներ է ծախսել այդ կենդանիներին գնելու համար։ Քարւանչին պարծենում էր նամանաւանդ իր ուղտերից մէկով, որի անունն էր Նաւռ։

Ջահել էր Նաւռը, երբ ձեռք բերից նրան Նադիմը։ Նա գնել է Նաւռին 500 դինարով, ճիշտ այնքանով, որքան արժէին միւս չորս ուղտը միասին։

Նաւռը քարաւանների էր։ Նա միշտ առաջնորդի դեր էր կատարում. ջոլերից ուժեղ էր, բարձր միւս ուղտերից ամբողջ գլխով։ Գիշերւայ նման սև էին աչքերը։ Նադիմը բարձրանում էր Նաւռի բարձր և դիք մէջքի վրայ և սարսանների մէջ բազմելիս զգում էր իրան շրջապատած փափուկ բարձերով։ Հազարտ Նաւռի լայն ճակատը, կարճ ականջները և երկար դունչը զարդարած էին 50 հատ զանգակներով, այդքան էլ երփներանգ գոյնզգոյն թելերից և փայլուն կտորներից կարած փնջերով։ Քարւանի պրղընձակուռ զանգը կապած յուլունքագործ լայն կաշուց, ինչպէս շուռ տւած մի մեծ բադիա, քաշ էր տւած Նաւռի վզից։ Զանգի մէջ լեզւակի տեղ այս ու այն կողմն էր ընկնում աւանակի սպիտակ ազդրոսկրը, որը գտել էր Նադիմը անապատի դեղնագոյն աւազների մէջ։

Զարդարւած Նաւռը ամենագեղեցիկն էր ուղտերի մէջ, և բախտաւոր Նադիմը չի կշտանում նրան նայելուց։ Քարւանչին Նաւռին համարում էր մի պարգև ստացած Աստւածանից իր առաքինութիւնների համար։ Նադիմը իր ենթադրութիւնների մէջ իրան սխալւած չէր համարում, որովհետև զգում էր, որ ինքը դրացիների մէջ արժանաւորագոյնն է։ Նա աղօթասէր էր, չէր մոռանում երբէք իր նամազը և իրեւ ճշմարիտ, ուղղափառ մուսուլման՝ խստութեամբ պահում էր բոլոր ծէսերը և ս. Ղուրանի աւանդները։

Մի անգամ, երբ արեգակը մայր մտաւ և երեկոյեան զովը աղջամղջի հետ պատեց երկիրը, Նադիմը բարձեց իր ուղտերը քանդակին ապրշումով և դիպակներով, կատարեց երեկոյեան նամազը և կարգին տեղաւորւելով իր Նաւռի փափուկ սապատների մէջ՝ քարւանի հետ ճամպայ ընկաւ աւազուտ անապատի միջով։

Նադիմը գնաց ամբողջ գիշեր անմարդաբնակ, լուռ, լայնածաւալ՝ քուն մտած ծովի նման ան-

շարժ անապատով։ Քայլուն աստղերը վառւում էին մոյգ կապոյտ երկնակամարի վրայ և ցոյց էին տալիս Նազիմի հեռաւոր ուղին։

Եւ Նազիմը Ալլահին էր վերառաքում իր երախտադիտական զգացմունքները, զարմանում Նրա իմաստուն անօրինութեան վրայ։ Աւանակի աղդրոսկրը նոյնպէս չէր թմրում. քաբւանի իւրաքանչիւր քայլի վրայ իր ծանր ոսկրեայ հղունգաւոր ծայրով զարնում էր զանգին և տալիս էր խուլ, բայց ուժգին ձայներ՝ «բո՜...ում, բո՜...օմ...»։

Այդ ձայները հաւասար թափով ճեղքելով դիշերային խաղաղ օդը՝ գնում էին հեռու, շատ հեռու և անհետանում անապատի մթնացած հեռաւորութեան մէջ, և այս խորհրդաւոր ձայների ազդեցութեան տակ լռակեաց ուղտերը կարծես խօսելիս լինէին վեհապանծ, բայց լուռ անապատի հետ։

Գիշերը սահում էր, բացւում էր օրը. աստղերը գունատւում էին և մէկ-մէկու ետևից մարում։ Արևելեան կողմում ամպերի փոքրիկ կտորները շառագունեցին ոսկեգոյն ծալերով։ Նազիմը տրորեց աչքերը, յորանջեց ծոյլ կերպով, ձգձգւեց և նայելով իր դիմացը, նշմարեց քաբւանատարայի մոյգ սաւերանկարները և ձիթենիների մոխրագոյն գլուխները։ Նա շատ ուրախացաւ։

—Հօ-հօ-հո, հօ-օ-օ, — ուրախ բացականչեց Նազիմը՝ խրախուսելով յոգնած ուղտերին։ Նառը հասկացաւ իր տիրոջը, իր ջոտ, ծուռը ոտքերը արագացրեց և խոշորացրեց քայլերը։ Զանգը զօդանջեց արագութեամբ։ Ցանկարծ ուղտերը կանգնեցին։ Զանգը լռեց։

Նազիմը զարմացաւ, բարձրացաւ նստած տեղից և տեսաւ Նառի դիմաց հինգ քայլ հեռաւորութեամբ դեղին աւազի վրայ կոպացած մի պառաւ կին։

—Է՛յ, պառաւ, ինչ ես քարւանիս առաջը կտրում. հեռացիր գնա,—բարկութեամբ գոչեց Նազիմը իր բարձր թամբից, ինչպէս մի խան իր դահոյքից։

—Օ՜, քարւանչի Նազիմ,—ասաց պառաւը,—չոքեցրու ուղտդ, իջիր ցած, որովհետև ասելս եմ կորցրել։ Մտանեցս այնպէս են թուլացել, որ ասելը ձեռիցս գլորւեց և ընկաւ աւազի մէջ. ոչ մի կերպ չեմ կարողանում գտնել։ Ես շատ եմ պառաւել։ Ալլահը զրկել է ինձ աչքի կարողութիւնից։ Դու որ կաս՝ չահէլ ես, քո աչքերը դեռ չեն կուչ եկել ժամաղ տարիքիդ ծանրութեան տակ։ Իջիր, քարւանչի, գտիր պառաւիդ մին ու ճար ասեղը, պէտք է շապիկս կարեմ և ծածկեմ մերկութիւնս։

—Ի՜նչ... Քո չնչին ասեղիդ համար իմ սար-ուղտին չոքացնե՞մ,—գոչեց Նազիմը չբնաւաւորած իր ակնջներին։ Պառաւ, քո տարիքի ծանրութիւնը թուլացրել է ոչ միայն քո աչքերը, մինչև անգամ խելքդ վերջին մնացորդներն էլ է քամել։

—Հօ-հօ-հօ,—բացականչեց Նազիմը, քաշեց սանձը և քշեց Նառին։

Նառը շարժւեց, իսկ նրա ետևից խօսք լսող երեխաների նման շարժւեցին և միւս չորս ընկերները։ Զանգաւ մի րոպէ քարւանի զանգի զօդանջումից, կտրւեց պառաւի ծոյլ, աղերսող ձայնը։

—Ինչ որ քոսոտ ժանգոտած ասեղի համար ամբողջ քարւան կանգնեցնեմ, — մրմնջում էր Նազիմը ճանապարհին շարունակ՝ յուզւելով պառաւի յանդգնութիւնից։—Ես շտապում եմ, որ ա-

բեդակը վրայ չըհասնի, իսկ այդ պառաւը իր ասեղով է մէջ ընկնում,— ասաց Նազիմը ցած թըռչելով Նաոից քաբւանսարայի դարպասների դիմաց հէնց . այն ժամանակ, երբ շառագունած աբեդակը բարձրացրեց իր ծայրը հորիզոնի եահից:

Նազիմը ուրախ և աշխուժով տարաւ ուղտերին քարէ պարիսպով շրջապատւած մեծ բակը, չոքեցրեց նրանց, բացեց թոկերը ծանր մանուկների վրայից և շտապ վերցրեց տոպրակը, վազեց դարձան գնելու սոված ուղտերի համար:

Երբ բերաւ տոպրակներով լի դարմանը, զարմացմամբ նկատեց, որ Նաոը չըկայ: Նազիմը յետ նայեց, սակայն բակում ոչոք չը կար: Ցած գցեց տոպրակը և դուրս վազեց: Նրա առաջ փըռւում էին լուռ անապատի դեղնագոյն աւազուտները, բայց Նաոը չըկար ու չըկար, կարծես չիմ էր կտրւել: Նազիմը գլուխը կորցրեց. սկսեց վազել, բայց ո՞ւր, ինքն էլ չըգիտէր:

Շատ վազեց թէ քիչ—չըգիտեմ: Նրա սպիտակ չալման խոր ընկել էր ծոծրակին, իսկ թուխ ճակատի վրայ երևացին քրտնքի խաշոր կաթիլներ: Յանկարծ նա տեսնում է, ճանապարհին նըստած է մի երիտասարդ սևահեր աղջիկ աւազի մէջ ինչ որ իր պարելիս:

Նազիմը գլուխը կորցրած մօտեցաւ նրան:

—Բոյրիկ, չե՞ս տեսել արդեօք իմ ուղտը, իմ թանգագին Նաոին, իմ սար Նաոին, իր յիսուն զանգակներով, երփներանգ գոյնզգոյն թելերից և վայլուն կըտորներից կարած վինջերով. նրա վրայ երկու անգուակ կար լիքը տպրշում և դիպակներով:

—Ալին ասաց, եթէ այսօր ես չըվերջացնեմ իմ պսակի շորը, նա ուրիշ կին կառնէ,—վշտացած պատասխանեց աղջիկը:—Ես էլ չը գիտեմ ինչպէս եղաւ, վեր ընկաւ ձեռիցս ասեղը, հիմա չեմ կարողանում գտնել: Նազիմ, տե՛ս, կը գտնե՞ս ասեղս:

—Ուղտս եմ ասում, սարի նըման Նաոս՝ թանկագին ապրանքներով,—կրկնեց Նազիմը աւելի բարձր ձայնով:— Ջե՞ս տեսել ուղտս:

—Ա՛յ, այստեղ գլորւեց ասեղս,—ցոյց տւաւ աղջիկն իր առաջի աւազուտը, ոչ մի ուշադրութիւն չդարձնելով Նազիմի խօսքերի վրայ:—Տե՛ս, Նազիմ, կը գտնե՞ս ասեղս:

—Աղջիկ,—գոչեց Նազիմը,—Նաոս եմ ասում, Նաոս, չե՞ս տեսել արդեօք: Իմ Նաոս, ուղտս, որին 500 դինար եմ տւել:

—Ի՞նչ ցաւը տամ գլխիս: Ո՞վ կը պահէ ինձ նման նստած աղջկան, եթէ Ալին ինձ թողնէ,—արտասուալից աչքերով խօսեց աղջիկը: Նազիմ, պարիր ասեղս:

Նազիմը տեսնելով, որ այդ աղջկանից ոչինչ օգտուելու չէ, համարեց նրան ցնորւած, թողեց ու վազեվազ հեռացաւ:

Շատ վազեց, թէ քիչ,—չը գիտեմ: Սպիտակ չալման գլորւեց ցած և բաց, խնամքով ածելած գլխի ու վզի վրայով քրտինքը թափւում էր յորդ կերպով, քըրջում էր նրա բեխերն ու միրուքը և ընկնում բերանը:

Յանկարծ Նազիմը մի գետ է տեսնում, ափին՝ մի ձկնորս, որը նոյնպէս թաց աւազի մէջ ինչ որ բան էր որոնում:

Նազիմը խելագորոյս մօտեցաւ ձկնորսին:

—Մուսուլման, կրօնակից եղբայր, չե՞ս տեսել արդեօք իմ ուղտը, իմ թանգագին, սար Նաոին, իր յիսուն զանգակներով,

երփներանգ, գոյնզգոյն թելերից և փայլուն կտորներից կարած վինջերով, երկու անգուկ թանկագին ապրանքներով։

Իսկ ձկնորսը պատասխանում է.

—Ախ, քաբանչի Նազիմ, գըղըձել է իմ ուռկանը, ուզում էի, որ կարեմ, բայց չիմացովի վեր գցեցի ասեղս աւազի մէջ և չեմ գտնում, իսկ երեխաները սոված են, պիտի ձուկ որսամ, որ կերակրեմ։ Մի տես, չէս գըտնիլ ասեղս։

—Ուղտն եմ ասում, իմ հոկայ Նառը, ապրշումով և դիպակներով բարձած Նառս,—կրկնեց Նազիմը աւելի բարձրացնելով ձայնը։—Չէս տեսել իմ ուղտը։

—Ա՛յ, կարծես այստեղ գլուխս եց, ասեղս եմ ասում,—ցոյց էր տալիս իր առաջը ձկնորսը, չլսելով Նազիմի խօսքերը։—Տես, որտնիր ասեղս, Նազիմ։

—Կորչի՛ք դո ասեղը,—գոչեց Նազիմը դուրս գալով համբերութիւնից։—Նառս եմ ասում, Նառս. չէս տեսել, Նառս, որին 500 դինար եմ տուել։

—Ես չեմ կարող երեխաներիս երեսը մինչև ձուկ չբռանեմ... Նազիմ, պարիր ասեղս։

Նազիմը տեսնելով որ ձկնորսից բան չի դուրս գալիս, համարեց նրան ցնորուած, թողեց և վազեց հեռու։

Շատ վազեց, թէ քիչ—չը գիտեմ։ Արեգակը բարձրացաւ երկնակամարի վրայ և այրում էր Նազիմին իր կիզիչ ճառագայթներով։ Ոտքերից թափւում էին արեխների վերջին կտորները, աւազը բուխարու նման այրում էր նրա բորլիկ ոտքերը։

Նազիմը յանկարծ տեսնում է մի հովիւ։

—Հովիւ,—վազեց նրա առաջ Նազիմը,—եղբայրս, ասա ինձ, չէս տեսել արդեօք իմ ուղտը, իմ թանկագին Նառին, իմ սար Նառին, չխուռն պանգակներով Նառին, երփներանգ, գոյնզգոյն թելերից և փայլուն կտորներից կարած վինջերով զարդարած, երկու հատ թանգագին ապրանքներով բարձած Նառին։

—Ախ, Նազիմ,—խօսեց վշտակից ձայնով հովիւը, բռնելով իր ոտը։—Ոտքիս մի չոր փուշ է մըտել և չի թողնում, որ գնամ իմ հօտի ետևից։ Ուզեցի ասեղով հանեմ, բայց չըգիտեմ ինչպէս եղաւ, որ ընկաւ ձեռիցս ասեղը, ա՛յ, հէնց այս աւազի մէջ, հիմա չեմ գտնում։ Մի պարտես ասեղըս, Նազիմ։

—Ոչտս եմ ասում, իմ սար

—Նառս, թանկագին հակերով բարձած ուղտս, ա՛յ մուսուլման,—գոռաց Նազիմը հովւի ականջին։—Չէս տեսել իմ ուղտը։

—Եթէ ես յիտ ճիամ, գայլերը կը յափշտակեն իմ ոչխարներին կը խեղդտան բոլորին,—գանգատւում էր հովիւը։—Նազիմ, մի տես, է՛, որտեղ է ասեղս...

—Յիմար, խուլ քաֆը,—գոչեց Նազիմը յուսահատւած բռնելով հովւի երկու թիկունքներից։—Նառս ես ասում, Նառս, չէս տեսել իմ ուղտը, որին 500 դինար եմ տուել։

—Ա՛յ, այստեղ վեր գցեցի ասեղս,—ասաց հովիւը, ցոյց տալով մի ձեռքով աւազը, իսկ միւսով բռնելով փուշ մտած ոտը։ Նա չէր զգում նոյն իսկ Նազիմի թափահարելը։

Տեսնելով, որ հովւից ոչինչ ըսպասելու չէ և համարելով դրան էլ ցնորած՝ Նազիմը թողեց հեռացաւ։

Շատ գնաց, թէ քիչ—չըգիտեմ։ Արեգակը բաւականին բարձրացել և ուղղահայեաց դիրք էր ընդունել. անխնայ թափում էր իր ճառագայթները Նազիմի վրայ և այրում նրան ոտքից գլուխ։ Ան-

քախտ քարւանչին զգում է, որ վերջին ուժերն իսկ դաւաճանում են իրան, ծալւում են ոտքերը։ Շրթունքները չորացան և ճաքճքւեցին. տապ օդը այրում է նրա ծանրացած կուրծքը։

Յանկարծ նա նորից տեսաւ մի պառաւ կին։

—Օ, մայրիկ, պառաւ, խնայէ, լսիր ինձ, սիրելիս, ասա, չէ՞ս տեսել արդեօք իմ ուղտը, իմ թանկագին Նաուին, իմ սար Նաուին, յիսուն զանգակներով, երփներանգ, գոյնզգոյն թելերից և փայլուն կտորներից կարած վերնջներով, ապրշումով և դիպակներով բարձած հակերով. իմ թանկագին Նաուին, որին 500 դինար եմ տուել։

—Ասեղս որոնիր, որովհետև պէտք է կարեմ շապիկս և ծածկեմ մերկութիւնս,—ասաց պառաւը։

Նպիմը սարսափ զգաց այդ ձայնից և ամբողջ մարմնով դողաց։ Նա բարձրացրեց բռունցքները և ծայր յուսահատութեամբ իջեցրեց իր շոգած, թաց գլխին ու ընկաւ երեսով գրուկ, դէմը աւազի վրայ։

Եւ Նպիմին երևեցաւ տեսիլ։ Կանգնած է նրա առաջ սիրելի Նաուը՝ բարձած թանկագին հակերով, կանգնած է շատ մօտ և նայում է իր տիրոջը իր սև և խելացի աչքերով։ Նպիմը մեկնում է ձեռները, ուզում է զբրկել նրա հսկայական փափուկ գլուխը, բայց յանկարծ գետնից գուրս է գալիս մի փոքրիկ, ժանգոտած ասեղ և ծածկում է ուղտին։ Նպիմը բռնում է ասեղը, ուզում է հանել տեղից, սակայն ասեղը խոյս է տալիս։ Շուրջը գնում-գալիս են բազմաթիւ մարդիկ և ոչ մինը չի ցանկանում պոկել ասեղը։ Նպիմը խնդրում է, աղերսում է, լալիս է, բայց բոլորն էլ անցնում են առանց որևէ ուշադրութիւն դարձնելու։ Բայց ահա մօտենում է նրան ինչ որ պառաւ։ Նպիմը նրան ճանաչում է։ Դա նրա մայրն է, իր սիրելի մայրը, որի մարմինը նա վաղուց, շատ վաղուց տարել է սրբազան Մեքքա և յանձնել հողին։

—Օ, մայր իմ,—աղերսում է Նպիմը,—Աստուած բարկացել է որդուդ վրայ, և մարդիկ այս աշխարհում շուռ են տուել իրանց երեսները ինձանից։ Ոչոք, ոչոք չի կամենում ինձ համար որոնել իմ սիրելի ուղտը, թանկագին ապրանքներով բարձած ուղտը, ոչոք չի օգնում ինձ։

Պառաւը խիստ և անտարբեր նայեց որդուն և ասաց.

—Ի՞նչպէս ես դու պահանջում մարդկանցից, որ թողած իրենց առօրեայ հոգսերը՝ գան քո ուղտը որոնեն, երբ դու անդորը սրտով, դիշերն էլ լաւ հանգրւանանալուց յետոյ չըկամեցար կոյր պառաւի համար բարձրացնել փոքրիկ ասեղը։ Մեծ է քո յանցանքը, ծո՛ր որդեակ, և արդար է Ամենակարողի դատաստանը։

Նպիմն ընկաւ գետին, փաթաթուեց մօր ոտներով և պառնատէս լաց եղաւ։

—Մայր իմ, մայր իմ,—հեկեկում էր նա, գարնելով իր գլուխը գետնին։—Ներէն օր, ներէ՛ գիշեր անդադար կաղօթեմ և կը խնդրեմ Ալլահին, որ նա ների իմ ծանր յանցանքը։

—Ո՛չ, չի ներւի քո մեղքը,—պատասխանում է պառաւը։

—Մայր իմ, ոտաբոբիկ, գլուխս ու կուրծքս լաց կերթամ սրբազան քաղաքը և քառասուն օր ու քառասուն գիշեր գլխիս տակ մոխիր կը ցանեմ։ Քառասուն գիշեր պահք և ծոմ կը պա-

հեմ, որ հզօրագոյն Ալլահը ների իմ ծանր մեղքը։

—Քո աղօթքները և ծոմերը այն չափով կը թեթեւացնեն քո դառն վիճակը, որքանով մի գըդալ քաղցր շերբեթը ովկիանոսի դառնութիւնը, — խիստ կերպով պատասխանեց պառաւը։

—Մայր իմ, օ մայր իմ,—աղերսում էր Նազիմը և ճանկրտելով իր երեսն ու կուրծքը սղերսում էր։—Ի՞նչ անեմ, ասա, ինչո՞վ քաւեմ իմ ծանր մեղքը։

—Աչքիս լոյս, Թանկագին որդիս,—լսեց Նազիմը մօր մեղմ և քնքոյշ ձայնը։—Որոնիր ուրիշի ասեղն այնպէս, ինչպէս քո Թանկագին ուղտը և կը ների քո ծանր յանցանքը, և Ադամի որդին և Ստեղծագործող Աստուածը չի շուռ տայ իր երեսը քեղնից։ Մեծ է Նրա ողորմութիւնը և անսահման բարութիւնը։

Եւ պառաւը չքացաւ օդի մէջ, ինչպէս ամպը կէսօրւայ ժամանակ։

Երբ Նազիմը ուշքի եկաւ և բարձրացաւ, արեգակի վերին ծայրը երևում էր արևմուտքում այնպէս, ինչպէս հեռաւոր մզկիթի պղնձէ կիսալուսինը հորիզոնի վրայ։ Նազիմը կորագլուխ գնաց որոնելու հովին, ձկնորսին և ուսահեր աղջկան, բայց և ոչ մէկին չը գտաւ։ Լուռ, մտախոհ անապատը մեկուսացած փուռում էր նրա շուրջը։ Հասկացաւ Նազիմը, որ երկնքի և երկրի մեծ մարգարէն յայտնուեց նրան դառնազան կերպարանքով, և Նազիմի մէջքը աւելի ծալուեց. նա աւելի կորացաւ։ Յանկարծ նրան թւաց, որ ղօղանջում է քարւանի զանգը։ Բարձրացրեց գլուխը—նրա առաջ է քարւանսարան և երեկոյեան օդի մէջ հնչւում են սիրելի ու թանգագին ձայները՝ բու...ում, բօ...օմ... Նազիմը վազից ձայնի վրայ և հազիւ ծուխ քարէ պարսպի անկիւնից, նա տեսաւ իր հըսկայ Նաւին։ Ջիթենիների տակ հանգիստ կերպով նա արածում էր տատասկները։

Նազիմը չոքեց և բացականչեց.

—Արդար է Քո դատաստանը, օ աշխարհների Ստեղծագործող, և անսահման է Քո ողորմութիւնը։

Եւ նորից լսեց մի մեղմ ձայն.

—«Որոնիր ուրիշի ասեղն այնպէս, ինչպէս պտրում կիր քո ուղտը»։

Ծովագոյն աղջամուղջը փըռւում էր լայնատարած, մտախոհ անապատի վրայ, և աներևոյթ ձեռներ վառում էին երկնքի կաթեղնները։

Ե. Ակուեան

ՄԻ ՕՏԱՆԻ ԿՌՈՒՆԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

արիները առաջ մի քաղաքում ապրում էր մի հարուստ մարդ, որը խիստ սիրում էր որսորդութիւնը։ Մի անգամ նա բռնեց մի կռունկ։ Քանի որ որսը բոլորովին ջահել էր և չաղ, պարոնը հրամայեց իր խոհարարին տապակել այդ կռունկը։

Խոհարարը մորթեց կռունկը, դրեց եռման ջրի մէջ և շուտ թեփուելու համար օգնութեան կանչեց ապախին Աննային։

— Ի հարկէ է,— մռմռում է Աննան փետրահան անելով թռչունը,— պարոնները կուտեն ամենալաւ կտորները և մեզ ոչինչ չեն թողնիլ։

— Այո,— պատասխանեց խոհարարը,— ինձ ու քեզ միշտ միայն ոսկրներն են հասնում։

— Ջէորը դա անարդարութիւն է. մենք պատրաստում ենք նրանց համար այդպիսի համեղ կերակուրներ, իսկ ինքներս միայն նայում ենք, թէ նրանք ինչպէս են ուտում։

— Այ, գիտես ինչ,— ուրախ ասաց Աննան.— հէնց որ կը տապակես, տուր ինձ մի ոտը, ես այդ շատ եմ սիրում։ Ջէորը պարոնին կը տան ամբողջ կռունկը, նա այդ չի էլ նկատիլ։

Խոհարարը երկար չէր համաձայնում, բայց երբ Աննա-

նան սկսեց շատ աղաչել նրան, նա խղճաց աղախնուն և տւեց մի ոտը։

Տապակածը տարան պարոնին։

—Ո՞ւր է մի ոտը,—գոռաց աղէն, նայելով կռունկի վրայ։

—Աղա, չէ՞որ կռունկը միայն մի ոտ է ունենում, ես միշտ տեսել եմ նրան մի ոտի վրայ,—ասաց խոհարարը, որին կանչել էին։

—Ի՞նչպես ես դու համարձակւում խաբել ինձ, երբ ես ինքս բռնեցի նրան երկու ոտքից,—բարկացաւ աղէն։

—Ոչ, աղա, ճիշտ եմ ասում, մի ոտ էր,—կրկնեց խոհարարը։

—Ախ, ինչ յամառն ես դու,—ասաց նրան աղէն։—Դէ լաւ, վաղը ես քեզ կը տանեմ ինձ հետ որսի և ցոյց կը տամ քեզ կռունկը. այն ժամանակ եթէ իմ ասածս կը լինի, դու երկար կը յիշես այդ բանը։

Հետևեալ օրը աղէն իր խոհարարի հետ միասին գնաց որսի։ Մօտեցան նրանք մի մեծ ճահիճի, ուսան ամբողջ երամ կռունկներ, որոնք բոլորն էլ կանգնած էին մի ոտքի վրայ։

—Աղա, ես չէի՞ ասում, տէս,—ուրախ բացականչեց խոհարարը։

Աղէն աւելի մօտ գնաց, սկսեց շարժել ձեռքերը և գոռալ՝ հշա... հշա... հու, հու...

Կռունկները զարթեցին և ցած դրին իրենց միւս ոտը։

—Դէհ, յամառ, տեսնում ես հօ կռունկի միւս ոտը,—ասաց աղէն։

—Այո՛, ի հարկէ, աղա, բայց երէկ սեղանի վրայ դուք չը շարժեցիք ձեռներդ և չը գոռացիք մեր կռունկին հու... հու... եթէ դուք այդպէս գոռայիք, երևի դուրս կը գար երկրորդ ոտն էլ,—պատասխանեց խոհարարը։



ԲՆՈՒԹԻՒՆՆ ԻՆՔՆ Է ՈՒՂԵՑՈՅՑ

Աժեն մէկիս յայտնի է, թէ որքան դիւրին է մոլորուել անտառում, երբ գտնուում ես նրա ամենախիտ վայրում։ Սակայն և այն դէպքում, երբ հետդ չունես կողմնացոյց և երկինքը ամպամած է և արեգակը չէ երևում, այն ժամանակն էլ դիտող մարդը կը գտնի ուղեցոյց, որ անսխալ կարող է դուրս տանել նրան իսկական ճանապարհի վրայ։

Նախ և առաջ հարկաւոր է պարզել այն հարցը, թէ հորիզոնի որ կողմ պէտք է կտրել ճանապարհը։ Այս նպատակով հարկաւոր է գտնել ծառ, որ կանգնած լինի մի այնպիսի և ուշի ուշով նրան զննել։ Այս ծառի կեղևը հարաւային կողմից միշտ աւելի չոր է, ամուր է և փայլուն, քան թէ հիւսիսային նրա կողմը։ Հիւսիսային կողմում ծառի տակ առհասարակ կարելի է գտնել մամուռի թանձր շերտ։ ծառերի ճեղքերից դուրս հոսող կպրածիւթը հարաւային կողմից արագ պնդանում է, սառնալով փայլուն սաթի գոյն, մինչդեռ ծառի հիւսիսային կողմից հոսածը մեծ մասամբ մուգ-մոխրագոյն է լինում և ծածկւած է լինում փոշու շերտով։ Բացի սրանից, տերևները հիւսիսային կողմում աւելի երկայն են և աւելի մուգ գոյն ունին հաղիւ նկատելի ջիղերով, քան թէ հարաւային կողմինը, որոնք աւելի մանր են, կոշտ և ջղերի ցանցը նրանց վրայ աչքի է ընկնում։ Հարաւային կողմից մինչև անգամ քարերը մերկ են, այնինչ հիւսիսային կողմում եղածները ծածկւած են մամուռով։ Վերջապէս արդը միշտ իր ոստայնը հիւսում է ծառերի հարաւային կողմում։ Այս մի քանի դիտողութիւնները բաւական են, որ մարդս ճանաչէ իր ուղին և դուրս գայ անտառի խորքից։

Ա. Բիւրիւեան

ԹԱՄԱՆՅ

ՏԱՌԱԽԱՂ

Առաջ. Ղարսի քաղ. ուս. աշակերտ Յով. Կարապետեանցի

ռ			Ե			Ե
	Ն		տ		պ	
		Յ	ա	Ղ		
Ղ	փ	ա	ա	ա	գ	ը
		օ	կ	տ		
	ը		ը		պ	
տ			պ			ա

Դասաւորեցէք այս տառերը այնպէս, որ ստորի ճառագայթներուն կարելի լինի կարդալ չորս բառ։

Ծուղրուղո՜ւ...

ԾՆՈՂՀՈՒՈՐ ՋՈՏԻԿ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1) *Ինքը անաչք ու անոտք է,*
Կոյրերին ճամբայ է ցոյց տալիս։

—

2. *Մարդու հետ հաւատար կը քայլէ,*
Մէկ մատնոցի տեղ կը բռնէ։

—

3. *Ինքը անոտք ու անաչք է,*
Մարդուն հաւատար մահ է հալիս։

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1. *Ծառոն ծառել ծառծըռել,*
Բերնից փրփուր ծործորել

—

2. *Ուլը եկաւ ուռի ծառը։*
Ուլ տեղովը ուռ ուռ ոլորեց։

Ժողովեց՝ **Գ. Ե. Մահիճեանց**

ԳԼԱԴՍՏՕՆ

Ճրագի լոյսն առաջ այնպէս բռնել մատները (տես նկ.) որ պատի վրայի շուքն առնայ Գլադստօնի դէմքը։

Շարունակւում է 1910 *թ. բաժանորդագրութիւնը*

XXVIII ՏԱՐԻ

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

XXI ՏԱՐԻ

Պատկերազարդ հանդիսաճեր

Տարեկան բաժանորդները առանում են՝

1) ԱՂԲԻՒՐ, 2) ՏԱՐԱԶ, 3) ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ, 4) Ա-ՌՈՂՋԱՊԱՀ, 5) ԳԵՂԱՓՆՋԻԿ, 6) ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Սա-ՆԱՀՆԻ վանքի դարաւոր հոյակապ կամարների տակ, 7) Ս. ՍԱՀԱԿ, 8) Ս. Մեսրոպ, 9) Վարպան զօրավարի ս. դիշակը օրհ-նում է Ղեւոնդ Երէցը, 10) ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, 11) Հայոց Հայրապետի ուղեւորութիւնը, 12) Ս. Իչման Տաճարի գեղանը-կարը 19-րդ դարում, 13) ԳԵՂԱՆԻ ՕՐԱՅՈՅՑ 1911 թ., 14) ՄԱՆ-ԿԱՆՈՅՈՒՄ, պիէս, 15) ՉԱՐԱՃՆԻ ԱՐՄԱՒԻՐԻԿԻ հանդամանքնե-րն ու արկածները, 16) Հայրենիք սրբազան, տեղա-գրական, 17) Ապրիլի 23-ին Աղբիւրի և Տարազի 1910 թ. 5000 №№-եր բաժանորդների մէջ վիճակ գցուղ 500 տարբեր-ների 2 տոմս։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ. *500 տարբերանքի 5000 №№-երի մէջ կը կայանայ զատկից յետոյ, ուրբաթ, ապրիլի 23-ին։ ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ տանտողները երկու №№ ունին, իսկ մեայն ԱՂԲԻՒՐ տարածողները մէկ №։ Բոլոր №№-ը անուանական են, բաժանորդի տպագրուած հասցէները, որ հրապարակաւ կը տուչուին և տպա կը դրուին տուփի մէջ։ Վիճակահանութեան հրաւիրում են ներ-կայ լինել բաժանորդները կամ նրանց լիազօրները։*

Այս բոլորն առանալու համար տարեկան բաժանորդները (Դպրոցներ, գրադարաններ, հասարակութիւններ, հասարակաւոր բա-ժանորդներ) վճարում են 10 *ր., արտասահման 18 ր. կամ 50 ֆր., իսկ զարդացական աշակերտի հասցէով* 5 *ր.։*

Ապառիկ եւ մաս-մաս վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

ՀԱՍՑԷ փոխելու համար պէտք է ուղարկել նորի հետ և հին հասցէն ու 35 *կ. էլ մարկա, հակառակ դէպքում հասցէն չի փոխուում։*

ԱՂԲԻՒՐԻ *№ 1 յունուար ապառած է. զարդացական աշակերտներ-ը* 1 *ր. ուղարկելով այսուհետև կը առանան ԱՂԲԻՒՐ № 2-ից։*

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ *առաջ բաժանորդները (5-րդ հրատ.) կուզա-կեն ԱՂԲԻՒՐ № 1 մինչև Զատիկ, ապա ԱՂԲԻՒՐ (1 յունուար) կու-զարկեն նրանց, որոնք 5 ր. փոխարէն կը վճարեն 6 ր.*

Հրատարակում են մեր բաժանորդները իրենց շրջանում տարածելու

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ

Հասցէն՝ **ТИФЛИСЪ, Редакція**

АГВЮР *կամ* **ТАРАЗЪ.**

TIFLIS. Direction AGBUR *կամ* TARAZ.

Тип. Т-ва «Культура». Тифлисъ, Вельяминовская, 18.